ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ_____

ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԱՔՍ ՀԱԿՈԲՅԱՆ

« 30 » օգոստոսի 2023թ.

ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

Առաջին կիսամյակ

Օգոստոս – սեպտեմբեր

N	Կատարման ժամկետ	Գործունեության տեսակ, պլանավորում	Վերահսկողություն (նկարագիր)	Կատարողներ
1.	Օգոստոսի 22-31-ը	Դասագրքերի բաշխում		Տնօրենություն, գրադարանավար, դասղեկներ
2.	Օգոստոսի 25-30	10-րդ, 11-րդ դասարանների՝ փոխադրական քննություններից վերաքննություն ունեցող սովորողների համար օգոստոսի 20-ից 30-ը վերաքննությունների կազմակերպում։ Վերաքննությունների անցկացման հանձնաժողովների կազմի հաստատում։		Տնօրենություն, մեթոդական միավորումների ղեկավարներ, դասղեկներ
2	Օգոստոսի 30-ին	Մանկավարժական խորհրդի կողմից մեթոդմիավորումների ներկայացրած նախնական դասաբաշխման առաջարկի քննարկում և որոշման կայացում։Դասալսումների քանակի սահմանում։	Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում դպրոցական բաղադրիչի ժամաքանակը որոշակի առարկայախմբերի հատկացնելու վերաբերյալ։ Սահմանել դասալսումներ ուսումնական 28 շաբաթների համար, յուրաքանչյուր ուսումնական շաբաթվա համար՝ 1. Ուսուցիչներ՝ 1 2. մ/մ նախագահներ՝ 1-2 3. տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ՝ 1-2 4. տնօրեն՝ 1	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ

3	Օգոստոսի 30-ին	Տվյալ առարկայախմբին տրված ժամաքանակի՝ որոշակի առարկաներին հատկացնելու հարցի քննարկում մեթոդմիավորման կողմից և համապատասխան առաջարկությամբ այն մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացում: Մանկավարժական խորհրդի համապատասխան որոշում է կայացում, ինչը հաստատվում է տնօրենի հրամանով:	Մանկավարժական խորհրդի որոշման և տնօրենի համապատասխան հրամանով ձևակերպվում է հանրակրթական ուսումնական հաստատության առաջիկա ուսումնական տարվա ուսումնական պլանը:	Մեթոդական միավորումներ, տնօրեն, մանկավարժական խորհուրդ
4	Օգոստոսի 30-ին	2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում:	Հաստատության ուսումնական պլանը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատվում է տնօրենի հրամանով և ներկայացվում ՀԱԱՀ ռեկտորի հաստատմանը:	Մանկավարժական խորհուրդ, տնօրեն
5	Օգոստոսի 30-ին	Նախորդ ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքների ամփոփում՝ հիմք ընդունելով ուսումնադասատիարակչակա ն աշխատանքի տարեկան պլանը (ՈՒԴԱՊ):	Ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունքներն ամփոփվում են մանկավարժական խորհրդի նիստում:	Մանկավարժական խորհուրդ

6	Օգոստոսի 30-ին	2023-2024թթ. ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման և վերահսկման ուղղությամբ լիազորությունների բաշխում:	Բաշխումը կատարվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, Հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության, ՀԱԱՀ վարժարանի կանոնադրության, մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկի և նկարագրերի և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթներին ու դպրոցի զարգացման ծրագրի պահանջներին համապատասխան:	Տնօրեն
7	Օգոստոսի 30-ին	Մանկավարժական խորհրդի կազմի հաստատում, մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն:	Մանկավարժական խորհրդի կազմը հաստատվում է տնօրենի հրամանով մեկ ուսումնական տարի ժամկետով: Հաստատվում է նաև մանկավարժական խորհրդի նիստերի ժամանակացույցը:	Մանկավարժական խորհուրդ, տնօրեն
8	Օգոստոսի 30-ին	Մեթոդմիավորման նախագահների և դասղեկների կազմի հաստատում	Տնօրենը հրամանով հաստատում և մանկավարժական խորհրդի նիստում ներկայացնում է մեթոդմիավորման նախագահների և դասղեկների անվանական կազմը և ներկայացնում ՀԱԱՀ ռեկտորի հաստատմանը:	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ

9	Օգոստոսի 30-31-ին	ՀԱԱՀ վարժարանի դասարանների կազմավորում	ՀԱԱՀ վարժարանի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, տնօրենի հրամանով՝ պահպանելով ՀՀ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգի և ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունում բազմահամակազմ դասարանի կազմավորման կարգի պահանջները։ Վարժարան նոր ընդունված 10-րդ դասարանների կազմավորումը հաստատվում է ՀԱԱՀ ռեկտորի հրամանով։	Մանկավարժական խորհուրդ, տնօրեն, ՀԱԱՀ ռեկտոր
10	Օգոստոսի 30-ին	Ուսումնադաստիարակչական աշխատանքերի տարեկան պլանի (ՈՒԴԱՊ) հաստատում։	ՈՒԴԱՊ-ը մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է տնօրենը։	Մանկավարժական խորհուրդ, տնօրեն
11	Օգոստոսի 30-ին	Առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում։	Դասացուցակը հաստատվում է տնօրենի հրամանով։	Տնօրեն
12	Օգոստոսի 30-ից մինչև Սեպտեմբերի 9-ը	Առանձին ուսումնական առարկաների թեմատիկ պլանների կազմում և հաստատում տնօրենի կողմից։	Թեմատիկ (օրացուցային) պլանը կազմվում է առարկան դասավանդող ուսուցչի կողմից և մեթոդմիավորման հավանությամբ ներկայացվում տնօրենի հաստատմանը։	Մեթոդական միավորում, տնօրեն

13	Սեպտեմբերի 1-15-ը	Դասարանների և Վարժարանի ծնողական խորհուրդների ձևավորում։ Հաստատության ծնողական ժողովի անցկացում։	Անցկացվում են դասարանական ծնողական ժողովներ, որոնց կողմից ընտրված ծնողական խորհուրդների կազմից ձևավորվում է հաստատության ծնողական խորհուրդը։ Վարժարան նոր ընդունված 10-րդ դասարանների ծնողական ժողովներն անցկացվում են տնօրենի կամ փոխտնօրենի մասնակցությամբ։	Դասղեկներ, տնօրենություն
14	Սեպտեմբերի 5-15-ը	Վարժարանի սովորողների առաջին ընդհանուր ժողովի հրավիրում։ Աշակերտական խորհրդի ձևավորման նախապատրաստում։	Վարժարանի սովորողների առաջին ընդհանուր ժողովը հրավիրվում է տնօրենի կողմից։ Աշակերտական խորհուրդը ձևավորվում է վարժարանի 10-12-րդ դասարանների դասարանական ժողովներում' փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրված մինչև երկու ներկայացուցիչներից։ Դասարանական ժողովներից հետո' 10- օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 27-ը, ընտրվում է նաև աշակերտական խորհրդի նախագահ։	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական գծով տեղակալ
15	Սեպտեմբերի 6-11-ը	Տարիֆիկացիոն ու հաստիքային ցուցակների և ամենամյա ծախսերի նախահաշվի կազմում և ներկայացում հաստատման։	Այդ փաստաթղթերը կազմում է տնօրենը և ՀԱԱՀ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների հավանությամբ ներկայացնում է ՀԱԱՀ ռեկտորի հաստատմանը։	Տնօրեն, ՀԱԱՀ գլխավոր հաշվապահ, ՀԱԱՀ կադրերի բաժին, ՀԱԱՀ ռեկտոր

16	Սեպտեմբերի 1-15-ը	Հանրակրթական ուսումնական հաստատության բյուջեի նախագծի և բյուջետային օրացույցի կազմում:	ՀԱԱՀ վարժարանի բյուջեի նախագիծը կազմում են տնօրենը, ՀԱԱՀ համապատասխան ստորաբաժանումը և ներկայացնում ռեկտորին: Բյուժետային նախագիծը ներկայացվում է ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի քննարկմանը և հաստատմանը: Բյուջետային օրացույցը կազմվում է ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությամբ ամրագրված ժամանակացույցին համապատասխան:	Տնօրեն, ՀԱԱՀ գլխավոր հաշվապահ, Ռեկտոր
17	Սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 27-ը	Մասնագիտական կողմնորոշման նպատակով այցելություններ ՀԱԱՀ տարբեր ստորաբաժանումներ, վարպետաց դասերի կազմակերպում:	Մասնագիտական կողմնորոշման նպատակով Վարժարանի 10-12-րդ դասարանների սովորողները այցելություններ են իրականացնում ՀԱԱՀ նորաստեղծ լաբորատորիաներ, տարբեր ստորաբաժանումներ, հանդիպումներ են ունենում ագրոոլորտի ներկայացուցիչների հետ, շրջայցեր են իրականացնում ՀԱԱՀ ենթակառուցվածքներ:	Տնօրեն, դասղեկներ, ՀԱԱՀ կարիերայի բաժին, ՀԱԱՀ ամբիոններ, ֆակուլտետների դեկաններ

18	Սեպտեմբերի 6-11-ը	Առաջին կիսամյակի դասացուցակի և դասաբաշխման, առարկայական թեմատիկ պլանների, սովորողների անձնական գործերի լրացում ***emis.am*** էլեկտրոնային համակարգում:	Առաջին կիսամյակի դասացուցակի, առարկայական թեմատիկ պլանների հաստատումից և սովորողների համակազմի ձևավորումից հետո դասացուցակը, թեմատիկ պլանները, սովորողների անձնական գործերում ընդգրկված տվյալները լրացվում են emis.am էլեկտրոնային համակարգում: Կատարվում է նաև ուսուցիչների վերաբերյալ տվյալների փոփոխություն՝ առկայության դեպքում:	Տնօրեն, համակարգչային օպերատոր
Հոկտեմբեր				
19	Հոկտեմբերի 2- 6-ը	Առարկայական մեթոդական միավորումների նիստեր:	Վարժարանի առարկայական մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության, դրանց իրականացման հետ կապված և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանն ուղղված այլ հարցեր:	Մեթոդական միավորումներ, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ
20	Հոկտեմբերի 2-ից 31-ը	Տնօրենի 2022-2023 ուստարվա հաշվետվության ներկայացում ՀԱԱՀ գիտական խորհրդի հաստատմանը:	Վարժարանի տնօրենը ՀԱԱՀ գիտական խորհրդին է ներկայացնում 2022-2023 ուումնական տարվա հաշվետվությունը: Ներկայացվում են Վարժարանի տնօրենի՝ 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանով նախատեսված անելիքները և գործունեության հիմնական դրույթները:	Տնօրեն, ՀԱԱՀ գիտական խորհուրդ, ՀԱԱՀ ռեկտոր

N	Կատարման ժամկետ	Գործունեության տեսակ, պլանավորում	Վերահսկողություն (նկարագիր)	Կատարողներ
21	Հոկտեմբերի 23-27-ը	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում: Ծնողական ժողովներ:	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ: Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները:	Տնօրենություն, դասղեկներ
22	Հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 3-ը	Մանկավարժական խորհրդի նիստ	Քննարկում է ուսումնական տարվա առաջին ամիսներին (սեպտեմբեր-հոկտեմբեր) ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների, թեմատիկ պլանների և էլեկտրոնային մատյանների վարման հարցեր: Մանկխորհուրդն անդրադառնում է նաև այլ հարցերի, մասնավորապես՝ - սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաների հաճա-խումների և առաջադիմության:	Տնօրեն, մանկավարժական խորհուրդ

Նոյեմբեր-դեկտեմբեր

23	Նոյեմբերի 10 - 13-ը	Տնօրենի հրամանը առարկայական օլիմպիադաների հանձնաժողովների կազմի հաստատման մասին	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի նախապատրաստության և կազմակերպման համար հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում են առարկայական օլիմպիադաների հանձնաժողովներ։	Տնօրեն, մեթոդական միավորումների նախագահներ
24	Նոյեմբերի 15 - 19-ը	Մեթոդմիավորումների կողմից հարցաշարերի կազմում և հաստատում տնօրենի կողմից	Մեթոդմիավորումների կողմից առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի հարցաշարերը և ստուգող հանձնաժողովների անվանացանկը կազմվում ու ներկայացվում են տնօրենի հաստատմանը։ Բնագիտական առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն անցկացվում է առցանց տարբերակով՝ կենտրոնացված կարգով մշակված հարցաշարերով։	Տնօրենություն, մեթոդական միավորումներ
25	Նոյեմբերի 22 -30-ը	Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Առարկայական մեթոդմիավորումների առաջարկությունների հիման վրա մանկավարժական խորհուրդը քննարկում և հաստատում է դասավանդման որակի ուսումնասիրության ծրագիրը, գործիքները (թեստ, թելադրություն, մրցույթ, համադպրոցական գրավոր աշխատանքի այլ տեսակներ), իրականացնող աշխատակազմը (տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, դասավանդող ուսուցիչներ, մեթոդմիավորման նախագահներ, դասղեկներ)։	Տնօրենություն, մեթոդմիավոր ումներ

26	Նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 8-ը	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում, արդյունքների ամփոփում:	Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլն անցկացվում է՝ - ԲՏՃՄ բնագավառի առարկաներինը՝ կենտրոնացված կարգով մշակված առարկայացանկով, հասարակագիտական առարկաներինը և ՆԶՊ առարկայինը՝ ուսումնական հաստատության մեթոդմիավորումների կողմից մշակված հարցաշարերով: Օլիմպիադաների դպրոցական փուլի արդյունքներն ամփոփվում և քաղաքային (շրջանային) փուլին մասնակցող սովորողների ցուցակները մ/մ-ների երաշխավորությամբ հաստատվում են հաստատության տնօրենի հրամանով:	Տնօրենություն, մեթոդական միավորումներ
27	Դեկտեմբերի 1-ից 8-ը	Մանկխորհ. 12-րդ դասարանների պետական ավարտական և միասնական քննությունների մասնակիցների հայտագրում: 12—րդ դասարանների ֆիզկուլտուրայի ստուգարքի կազմակերպման հարցեր: Պայմանական փոխադրված աշակերտների վերաքննությունների կազմակերպում:	Մանկավարժական խորհուրդը քննարկում է Հաստատության 10-րդ և 11-րդ դասարանների՝ վերաքննություն ունեցող սովորողների վերաքննության անցկացման հարցերը, 12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննություններին՝ հայոց լեզու և գրականություն, պատմություն, մաթեմատիկա առարկաներից, մասնակցության և հայտագրման հարցերը:	Տնօրենություն, մեթոդ միավորման նախագահներ, օպերատոր

28	Դեկտեմբերի 4-ից 22-ը	Տնօրենի հաշվետվությունը ՀԱԱՀ ռեկտորատին 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի վերաբերյալ:	ՀԱԱՀ ռեկտորատը լսում և հավանության է արժանացնում Վարժարանի տնօրենի հաշվետվությունը 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնադաստիարակչկան գործընթացի կազմակերպման վերաբերյալ:	ՀԱԱՀ վարժարանի տնօրեն, ՀԱԱՀ ռեկտորատ
29	Դեկտեմբեր 11-15-ը	Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն	Ուսումնասիրությունը անցկացվում և արդյունքներն ամփոփվում են նույն կարգով:	Տնօրենություն, մեթոդական միավորումներ
30	Դեկտեմբերի ի 25- 30-ը	Մանկավարժական խորհրդի նիստ. • Առաջին կիսամյակում սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների ամփոփում: • Տնօրենի ուսումնական գծով տեղակալի և մ/մ նախագահների հաշվետվությունները: • Էլեկտրոնային մատյանների վարման հարցերի քննարկում: • Երկրորդ կիսամյակի դասացուցակի ներկայացում և հաստատում: • Վարժարանի 12-րդ դասարանների 2-րդ կիսամյակի ուսպլանի փոփոխությունների հաստատում:	Մանկավարժական խորհուրդը քննարկում է ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների, ՀԱԱՀ գիտխորհրդի որոշումների կատարման, էլեկտրոնային մատյանների վարման հարցեր: 12-րդ դասարանների 2-րդ կիսամյակի առարկայացանկի փոփոխությունները հաստատվում են մանկխորհի կողմից: Տնօրենի հաստատմանը ներկայացվելուց հետո ուսպլանը հաստատում է ՀԱԱՀ ռեկտորը: Տնօրենի հրամանով հաստատվում է 2-րդ կիսամյակի դասացուցակը:	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ

Երկրորդ կիսամյակ

Հունվար

	Կատարման ժամկետ	**Գործունեության տեսակ, պլանավորում**	**Վերահսկողություն (նկարագիր)**	**Կատարողներ**
1	Հունվարի 3-8-ը	Երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացի նախապատրաստում	Տնօրենության կողմից՝ • երկրորդ կիսամյակի ուսումնական պլանին համապատասխան կատարվում է դասաբաշխում, • կազմվում է դասացուցակ:	Տնօրենություն
2	Հունվարի 26-29-ը	«Բանակի օր» տոնին նվիրված միջոցառումներ	Կազմակերպվում է հետևյալ միջոցառումները. • այցելություն պանթեոն, • հանդիպում Արցախյան պատերազմների վետերանների հետ, • միջոցառման կազմակերպում:	Տնօրենություն, դասղեկներ
3	Հունվարի 10-31-ը	Ներդպրոցական վերահսկողության իրականացում	• Մատենավարության ստուգում • Դասղեկի ժամերի ստուգում	Տնօրենություն
4	Հունվարի 15-ից փետրվարի 15-ը	Վարժարանի 12-րդ դասարանների՝ միասնական քննություններին հայտ ներկայացրած սովորողների վերաբերյալ տեղեկությունների վերլուծություն:	12-րդ դասարանների դասղեկները քննությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցում են Վարժարանի տնօրինությանը:	Վարժարանի օպերատոր, դասղեկներ, տնօրենի՝ ուսումնական գծով փոխտնօրեն, տնօրեն

5	Հունվարի 30-ից մինչև 2023 ուստարվա ավարտը	Մասնագիտական կողմնորոշման դասընթացների, վարպետաց դասերի, ՀԱԱՀ տարբեր ստորաբաժանումներ այցելությունների կազմակերպում և իրականացում:	Վարժարանի տնօրենությունը, դասղեկները ՀԱԱՀ ստորաբաժանումների ղեկավարների, դասախոսների, ոլորտի հրավիրյալ մասնագետների հետ համատեղ իրականացնում են մասնագիտական կողմնորոշմանը նպաստող տարաբնույթ ծրագրեր և նախագծեր:	Վարժարանի տնօրենություն, Դասղեկներ, ուսուցիչներ, ՀԱԱՀ դասախոսներ, Դեկաններ, ամբիոնների վարիչներ և ոլորտային այլ կառույցների ներկայացուցիչներ:

Փետրվար

	Կատարման ժամկետ	Գործունեության տեսակ, պլանավորում	Վերահսկողություն (նկարագիր)	Կատարողներ
6	Փետրվարի 2-9-ը	Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքների ամփոփում և մարզային փուլի նախապատրաստում;	Տնօրինության կողմից՝ տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը ներկայացնում է օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքները:	Տնօրենություն
7	Փետրվար-մարտ	Ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրություն:	Ուսումնասիրությունն իրականացնում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրյալ առարկայական մասնագետներ:	Տնօրենություն, մ/մ նախագահներ
8	Փետրվարի 1-29-ը	Ուսումնական հաստատության ջեռուցման կազմակերպում՝ (Ներքին գնահատում:Գլուխ IV. Շահագործվող հաստատությունների օդի ջերմային ռեժիմին ներկայացվող պահանջներին համապատասխան):	Մասնաշենքի պարետը պարբերաբար հետևում է Վարժարանի դասասենյակների, մարզադահլիճի ջերմային ռեժիմի պահպանմանը:	Տնօրենություն, 5-րդ մասնաշենքի պարետ, ՀԱԱՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր

9	Փետրվարի 10-29-ը	Ներդպրոցական վերահսկողության իրականացում	• Մատենավարության ստուգում • Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների վերահսկողություն • Մասնագիտական նկողմնորոշմանն ուղղված տարաբնույթ աշխատանքներ	Տնօրենություն, դասղեկներ
10	Փետրվարի 27-ից մարտի 5	Մանկավարժական խորհրդի նիստ. 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի և միասնական քննությունների արդյունքների ամփոփում: Դասղեկների հաշվետվությունների քննարկում:	Մանկավարժական խորհուրդը քննարկում և հաստատում է Վարժարանի՝ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի առաջադիմության վերջնական արդյունքները, դասղեկների հաշվետվությունները:	Դասղեկներ, տնօրենի՝ ուսումնական գծով փոխտնօրեն, տնօրեն

Մարտ

	Կատարման ժամկետ	**Գործունեության տեսակ, պլանավորում**	**Վերահսկողություն (նկարագիր)**	**Կատարողներ**
11	Մարտի 4-7-ը	Տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	Տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի տեղակալի, մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ **խորհրդակցությունը** քննարկում է բնագիտական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրության և ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, սովորողների ուսումնական առաջադիմության արդյունքների բարձրացման հարցը:	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մ/մ նախագահներ

12	**Մարտի 11-15-ը**	Տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և մեթոդմիավորումների նախագահների մասնակցությամբ խորհրդակցություն	Տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մ/մ նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է ուսումնական ծրագրերի պահանջների իրագործման, մասնագիտական կողմնորոշման նպատակով ՀԱԱՀ ստորաբաժանումներ, լաբորատորիաներ այցելությունների կազմակերպման հարցերը։	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ
13	Մարտի 11-22-ը	Մեթոդմիավորումների նիստեր։	Մեթոդմիավորումները քննարկում են ուսումնական նախագծերի թեմատիկայի ընտրության և դրանց իրականացման հետ կապված հարցեր։ Դպրոցական տարաբնույթ միջոցառումների անցկացման հարցեր։	Տնօրենություն

14	Մարտի 25-ից ապրիլի 5-ը	Մանկավարժական խորհրդի նիստ։	Քննարկում է 2-րդ կիսամյակի առաջին ամիսներին ուսումնադաստիարակչական գործընթացի և սովորողների ուսումնական առաջադիմության, էլեկտրոնային մատյանների վարման, Ուսումնական նախագծերի իրականացման, դասալսումների արդյունքների և այլ հարցեր։ Տես՝ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, կետ 79-80։	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մ/մ նախագահներ
15	**Մարտի 25-ից ապրիլի 5-ը**	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփում։	Սովորողների ուսումնական առաջադիմության նախնական ամփոփումը կատարվում է գրավոր աշխատանքների, գրավոր և բանավոր ստուգման տարբեր տեսակների կիրառմամբ։	Տնօրենություն, դասղեկներ

Ապրիլ

	Կատարման ժամկետ	**Գործունեության տեսակ, պլանավորում**	**Վերահսկողություն (նկարագիր)**	**Կատարողներ**
16	**Ապրիլի 1-ից 14-ը**	Ծնողական ժողովներ։	Ծնողական ժողովներում ներկայացվում են սովորողների ուսումնական առաջադիմության գնահատման արդյունքները։	Տնօրենություն, դասղեկներ

17	Ապրիլի 3-ից 30-ը	Հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակի փոխանցում ԳԹԿ (12-րդ դասարան), Վարժարանի 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննությունների ընթացակարգի քննարկում:	12-րդ դասարանների պետական ավարտական քննություններին մասնակցողների ցուցակն ըստ առարկաների Վարժարանի տնօրենը էլեկտրոնային եղանակով լրացնում և փոխանցում է ԳԹԿ: Մ/մ նախագահները ստանում են հանձնարարականներ՝ հայոց լեզու, հանրահաշիվ առարկաներից Վարժարանի 10-րդ և 11-րդ դասարանների սովորողների համար կազմել փոխադրական քննությունների թեստային առաջադրանքներ:	Տնօրեն, օպերատոր, մ/մ նախագահներ, դասղեկներ
18	Ապրիլի 5-ից մայիսի 15-ը	Վարժարանի 10-րդ և 11-րդ դասարանների հունիս ամսին կազմակերպվող փոխադրական քննությունների (հայոց լեզու, հանրահաշիվ առարկաներից) թեստային առաջադրանքների կազմում և հաստատում:	10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննությունների առաջադրանքները կազմվում են հաստատության մեթոդմիավորումների կողմից, որոնք հաստատում է վարժարանի տնօրենը:	Մեթոդական միավորումներ, տնօրեն
19	Ապրիլի 1-5-ը	Տնօրենի, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալի մասնակցությամբ խորհրդակցություն:	Տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի և մանկավարժական աշխատողների մասնակցությամբ **խորհրդակցությունը** քննարկում է տարվա ընթացքում սովորողների բացակայությունների նախնական հաշվառում անցկացնելու հարցը:	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, դասղեկներ

20	Մարտի 13-ից ապրիլի 19-ը	Հերթական (պարտադիր) ատեստավորման ենթակա և կամավոր ատեստավորման հայտ ներկայացրած ուսուցիչների ցուցակների կազմում:	Հերթական (պարտադիր) ատեստավորման ենթակա և կամավոր ատեստավորման հայտ ներկայացրած ուսուցիչների վերաբերյալ տվյալները ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումներին (կառույցներին): Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերաբերյալ հաստատության տնօրենը անհրաժեշտ գրանցում է կատարում ԿՏԱԿ-ի դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում, կամավոր ատեստավորմանը վերաբերող տվյալները ԿԳՄՍ նախարարության հայտարարության առկայության դեպքում նախարարություն են ներկայացնում հայտատու ուսուցիչները, հաստատության տնօրենը տրամադրում է համապատասխան տեղեկանք:	Տնօրեն, օպերատոր

21	Ապրիլի 15-30-ը	Անդրադարձ ուսումնական առարկաների դասավանդման որակի ուսումնասիրությանը	Տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ իրականացվում է խորհրդակցություն, վերլուծվում են ուսումնասիրության արդյունքները, ձեռքբերումներն ու դժվարությունները: *Տես՝ «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն:*	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ

Մայիս

	Կատարման ժամկետ	Գործունեության տեսակ, պլանավորում	Վերահսկողություն (նկարագիր)	Կատարողներ

22	Մայիսի 2-ից 5-ը	Վարժարանի **մանկավարժական խորհրդի** նիստ՝ 12-րդ դասարանների սովորողների կողմից ընտրված պետական ավարտական քննական առարկաների ցանկի հաստատում։ Պետական ավարտական քննություններին նախապատրաստության գործընթացի քննարկում։ 12-րդ դասարանների սովորողների միասնական քննությունների մասնակցության հայտերի հստակեցում։ Հայոց լեզու, հանրահաշիվ առարկաներից Վարժարանի 10-րդ և 11-րդ դասարանների սովորողների համար հունիսին անցկացվող փոխադրական քննություններին ընդառաջ լրացուցիչ ֆակուլտատիվ խորհրդակցությունների կազմակերպում։	Սովորողների կողմից ընտրված քննական առարկաների ցանկը հաստատվում է Վարժարանի մանկավարժական խորհրդի որոշումով։ Տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է պետական ավարտական և փոխադրական քննություններին նախապատրաստության ընթացքը, տալիս համապատասխան հանձնարարություններ։	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ, դասղեկներ, մանկավարժական այլ աշխատողներ, օպերատոր

23	Մայիսի 5-ից 12-ը	Ուսումնական տարվա ընթացքում **120-200 ժամ դասերից բացակայած** սովորողների հարցի քննարկում մանկավարժական խորհրդում և համապատասխան տեղեկատվության ներկայացում։	Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած սովորողների հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում։	Տնօրեն,դասղեկներ

24	Մայիսի 16-ից 18-ը	Վարժարանի 10-րդ և 11-րդ դասարանների սովորողների համար հայոց լեզու, հանրահաշիվ առարկաներից կազմված փոխադրական քննական առաջադրանքների՝ թեստերի տարբերակների ներկայացում տնօրենի հաստատմանը:	Վարժարանի տնօրենի հաստատմանն են ներկայացնում տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալը և /կամ/ մեթոդմիավորման նախագահները:	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ
25	Մայիսի 15-17-ը	• Անդրադարձ էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումներին:	Տնօրենի, ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ խորհրդակցությունը քննարկում է էլեկտրոնային մատյաններում կատարվող գրանցումների հարցը, նշում թերությունները, կատարում հանձնարարություններ դրանք որոշակի ժամկետում շտկելու ուղղությամբ:	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ

26	Մայիսի 15-17-ը	Ուսումնական տարվա ընթացքում **120-200 ժամ դասերից բացակայած 10-12-րդ** դասարանների սովորողների՝ Հաստատությունից դուրս մնալու հարցի քննարկում **մանկավարժական խորհրդում** և համապատասխան տեղեկատվության ներկայացում:	Ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ դասերից բացակայած 10-12-**րդ** դասարանների սովորողների Հաստատությունից դուրս մնալու հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդում:	Տնօրեն,դասղեկներ
27	Մայիսի 20-22-ը	Անդրադարձ Վարժարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարմանը:	Դպրոցի տնօրենի, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալի, մեթոդմիավորումների նախագահների և այլ մանկավարժական աշխատողների մասնակցությամբ **խորհրդակցությունը** քննարկում է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով երկրորդ կիսամյակի համար նախատեսված աշխատանքների կատարման ընթացքին, գնահատում արդյունքները և տալիս համապատասխան հանձնարարություններ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման ուղղությամբ: Խորհրդակցության ընթացքում բարձրացված հարցերը քննարկման են դրվում Վարժարանի մանկավարժական խորհրդի առաջիկա նիստում:	

28	Մայիսի 20-30-ը	Ուսումնական տարվա ընթացքում **120-200 ժամ դասերից բացակայած 10-12- րդ** դասարանների սովորողների՝ լրացուցիչ քննությունների և ամփոփիչ ստուգողական աշխատանքների անցկացում։	**10-12-րդ դասարաններում 120-200 ժամ** բացակայության դեպքում սովորողները մինչև տվյալ ուստարվա ավարտը լրացուցիչ քննություններ և ստուգողական աշխատանքներ են հանձնում ըստ գործող կարգի։	Տնօրեն, տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, մեթոդական միավորումների նախագահներ
29	Մայիսի 24-25	ՀԱԱՀ վարժարանի 12-րդ ավարտական դասարանների <<Վերջին զանգ>> միջոցառման կազմակերպում։	ՀԱԱՀ վարժարանի 12-րդ դասարանների սովորողների մասնակցությամբ կազմակերպվում և անցկացվում է <<Վերջին զանգ>> միջոցառումը։	ՀԱԱՀ վարժարանի 12-րդ դասարանների սովորողներ, ծնողական համայք, n
30	Մայիսի 30-31-ը	Մանկավարժական խորհրդի նիստ. Վարժարանի 12 -րդ դասարանների սովորողներին պետական ավարտական քննություններին մասնակցել թույլատրելու հարցի քննարկում։ 10-րդ, 11-րդ դասարանների սովորողներին փոխադրական քննություններին մասնակցել թույլատրելու հարցի քննարկում։	12-րդ դասարանների սովորողներին պետական ավարտական քննություններին, 10-րդ և 11-րդ դասարանների սովորողներին փոխադրական քննություններին մասնակցել թույլատրելու հարցը քննարկվում և համապատասխան որոշում է ընդունվում Վարժարանի մանկավարժական խորհրդի նիստում։	Տնօրեն

Հունիս, հուլիս

31	Հունիս	12-րդ դասարանների պետական ավարտական, 10-րդ և 11-րդ դասարանների փոխադրական քննությունների անցկացում։ ՀԱԱՀ ռեկտորի հրամանով՝ քննությունների կազմակերպման հանձնաժողովի կազմի հաստատում։	Պետական ավարտական քննություններն անցկացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված պահանջներին համապատասխան։ Փոխադրական քննություններն անցկացվում են Լիազոր մարմնի կողմից հաստատված պահանջներին և ՀԱԱՀ վարժարանի կանոնադրության պահանջներին համապատասխան, Վարժարանի մ/մ -ներ կողմից կազմված և տնօրենի կողմից հաստատված համապատասխան առաջադրանքներով՝ թեստերով։	ՀԱԱՀ ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողով՝ նախագահությամբ Վարժարանի տնօրենի և վերահսկող անձնակազմի։
32	Հուլիսի 1-ից 8-ը	12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննություններից վերաքննություն ունեցող սովորողների վերաքննությունների կազմակերպում և անցկացում։	Վերաքննություններն անցկացվում են Նախարարության կողմից սահմանված կարգով և ժամկետներում։	Տնօրենություն

33	Հուլիսի 8-ից 10-ը	Մանկավարժական խորհրդի նիստ. ՀԱԱՀ վարժարանի 12-րդ դասարանների սովորողներին Պետական ավարտական նմուշի փաստաթղթի՝ ատեստատի հանձնում։ 10-րդ, 11-րդ դասարանների՝ փոխադրական քննություններից վերաքննություն ունեցող սովորողների համար օգոստոսի 20-ից 30-ը վերաքննությունների կազմակերպման հարցի քննարկում և հաստատում։	Մանկավարժական խորհուրդը որոշում է կայացնում 12-րդ դասարանների շրջանավարտներին պետական ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ, շնորհելու մասին։ 10-րդ, 11-րդ դասարանների՝ փոխադրական քննություններից վերաքննություն ունեցող սովորողների համար օգոստոսի 20-ից 30-ը կազմակերպել վերաքննություններ։	Տնօրեն, օպերատոր, դասղեկներ։ Վարժարանի շրջանավարտները ատեստատ են ստանում ՀԱԱՀ ռեկտորի վավերացմամբ։
34	Հուլիսի 10-ից օգոստոսի 31-ը	Վարժարանի 10-րդ դասարանների սովորողների ընդունելություն։ 11-րդ և 12-րդ հոսքային դասարանների սովորողների համալրում՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով։	10-րդ դասարան ընդունելությունը ուսումնական հաստատություն իրականացվում է ՀԱԱՀ ռեկտորի հրամանով՝ դպրոցահասակ սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և ՀԱԱՀ ռեկտորի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ ՀԱԱՀ վարժարանի կանոնադրությամբ սահմանված կարգով։	ՀԱԱՀ վարժարանի ընդունող հանձնաժողով՝ նախագահությամբ ՀԱԱՀ ռեկտորի
35	Հուլիս-օգոստոս	Ագրոճամբար	Վարժարանի 10-րդ, 11-րդ դասարանների սովորողների համա ամառային հանգստի կազմակերպում ՀԱԱՀ ,,Զարթոնք,, հանգստյան տանը (Աղավնաձոր)։ Մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, այցելություններ ոլորտային կազմակերպություններ։	ՀԱԱՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, Վարժարանի տնօրեն, ֆիզկուլտուրայիուս ուցիչներ, այլ մանկավարժական աշխատողներ։